

25.05.2018թ.

ՄԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԱՌԹԻՎ

Հարգելի համաքաղաքացիներ

Այսօր տոնական հանդերձանք են հագել հանրապետության դպրոցները: Վերջին զանգ ավանդական հանդիսությունը մեկտեղել է հասունության, խոստովանությունների և հիշողությունների լավագույն պահերը՝ մի հարկի տակ հավաքելով շրջանավարտներին, ուսուցիչներին, ծնողներին:

Հրաշալի խորհուրդ ունի այս տոնակատարությունը. այն փակում է դպրոցական կյանքի էջը և ազդարարում նոր կյանքի սկիզբը:

Միբելի շրջանավարտներ.

Ես կիսում եմ յուրաքանչյուրիդ զգացողություններն ու ապրումները, որոնք հատուկ են մեծ կյանքի շեմին կանգնած պատանիներին և աղջիկներին:

Ողջ օրվա ընթացքում դուք հիշել և վերապրել եք դպրոցական ջերմ ու հարազատ միջավայրում անցկացրած տարիները, որոնք այլևս դարձել են ձեր կյանքի մի մասը:

Առջևում ձեզ սպասվում է ինքնուրույն քայլելու հաստատակամությունը, բաղձալիին հասնելու ձգտումը, պիտանի մարդ և հպարտ քաղաքացի դառնալու վճռականությունը:

Դուք կյանք եք մտնում մեր երկրի համար վճռորոշ և պատմական ժամանակաշրջանում, ձեզ համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները ինքնահաստատման ու կայացման, որը միաժամանակ պարտավորեցնող է:

Համոզված ենք, որ ունենք գիտելիք, կամք՝ հաղթահարելու յուրաքանչյուր դժվարություն և ձեր ներդրումն ունենալու մեր երկրի ու քաղաքի շենացման գործում: Մեր երկիրը առողջ, ուժեղ, խելացի, պատրաստված, հայրենասեր մարդկանց կարիքը միշտ էլ զգում է, և ես, հավատացած եմ, որ դուք հենց այդպիսին եք:

Ձեզանից շատերը շուտով կհամալրեն նաև Հայոց բանակի շարքերը: Ցանկանում եմ, որ պատվով կրեք նաև հայրենիքի զինվորի կոչումը:

Այս տոնական պահին իմ շնորհավորանքներն են հղում կրտսեր և հիմնական դպրոցի շրջանավարտներին. մայիսյան այս օրն առանձնանում է նաև նրանց կյանքում՝ դառնալով ուսումնառության տարվա ավարտ և մի նոր փուլի սկիզբ:

Հարգարժան մանկավարժներ,

Ձեր երեխաներից ու սաներից առավել հուզված եք դուք: Ձեր շնորհիվ ու ձեր ջանքերով են նրանք ճանաչել այս իրականությունը, ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ:

Դուք եք, որ հպարտացել ու ոգևորվել եք ձեր աշակերտների հաջողություններով, դարձել նրանց առաջին խորհրդատուն, իսկ այսուհետ էլ նրանց հետագա կյանքի ու ապագայի ձեռքբերումներով եք թևավորվելու:

Հարգելի ծնողներ,

Օրը նաև ձերն է ու օրվա պարզևած պահերը ձեր շրջանավարտ զավակների հետ կիսում եք նաև դուք: Ցանկանում եմ, որ միշտ ապրեք հպարտության և ոգևորության պահեր:

Սիրելի շրջանավարտներ.

Առջևում միասնական քննություններն են, ձեր հասունության և իմացության փորձաշրջանը, որին հաջորդելու է կյանքի մի նոր փուլ: Ես հավատում եմ, որ կյանք էք մտնելու՝ որպես խելացի և կազմակերպված մարդիկ, որ լինելու էք մեր համայնքի և մեր պետության արժանի քաղաքացիները: Հիշեք՝ գիտելիքը մնայուն արժեք է, այն կուտակեք անսպառ՝ հարթելով ձեզ համար ճանապարհ՝ որպես մասնագետ ու քաղաքացի:

Այսօր մեր երկրում կատարվող փոփոխությունների վկան ու մասնակիցն էք դուք, նաև ձեր շնորհիվ ու ձեր ջանքերով մեր երկրում պետք է գրանցվի կայուն առաջընթաց:

Եղեք հպարտ ու ազնիվ և թե սվեք ձեր երազանքներին:

Պատանի բարեկամներ,

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ սիրված ու սպասված օրվա՝ «Վերջին զանգ» տոնակատարության առթիվ:

Մաղթում եմ ձեզ նախընտրած մասնագիտությամբ վերելքների ուղին նվաճելու անսպառ եռանդ, կամք և վճռականություն:

Ցանկանում եմ ձեզ լուսավոր ապագա, հաջողություն ուսումնառության և աշխատանքային հետագա տարիների ընթացքում, եղեք երջանիկ, ապրեք ձեր տարիքին հատուկ խանդավառությամբ՝ լի երազանքներով ու նպատակներով: Վերջին զանգն էլ թող դառնա բարձունքներ նվաճելու, նոր արահետներ բացելու ճանապարհի սկիզբը՝ պարզելով ձեզ մտքի և հոգու անսպառ լույս:

Բարի երթ ձեզ, սիրելի շրջանավարտներ: